ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2013թ. թիվ 95-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ 130-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.18 կետի ա) ենթակետով, հաշվի առնելով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության սոցիալ-առողջապահական ծառայությունների համակարգողի 04.04.2013թ. թիվ 046 գրությունը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2008թ. մարտի 31-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով Լոռու մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 130-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովի կազմը լրացնել հետևյալ անդամով՝

«Սյուզաննա Քոչարյան - «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Վանաձորի համայնքային կենտրոնի սոցիալական աշխատող»:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. հունիսի 11
ք.Վանաձոր